

երկայն՝ քաղցրաբոյր եւ սաթագլուխ ծխափողը կը ծխէ եւ թաս մը խահուէ կ'առնու, իւր ընտանեաց կամ դրացեաց հետ կը շաղփաղփէ, կամ ճիշդ արեւելեան կերպով ժամանակ կ'անցընէ:

Միմիկինովիչ - Սդաուֆէի ըսածն, թէ Հայք իրենց տներն ու պարտէզները « ամենաբարձր տախտակներով » կը պարսպեն, ճիշդ չէ. բայց տարակոյս չկայ որ Հայք հասարակավարաց եւ ընկերավարաց բարեկամ չեն, եւ կը ջանան ճգամբք վաստկած ինչքն ու ստացուածքն պահել:

Պէտք է նաեւ յիշել՝ որ Սուչավայի Հայք ունին սեպհական ազգային +ուլն: մը՝ « Անի », անուամբ, որ կը գտնուի ժողովրդապետական եկեղեցւոյ շուրջը նոյն եկեղեցւոյն վերաբերեալ վարձու տան մէջ, ուր հայերէն, գերմաներէն, ռումաներէն եւ գաղղիերէն լրագիրներ կան. ունին նաեւ սեպհական սրճանոց մը: Շատ ցանցառ կը տեսնուի՝ որ Հայ մը ուրիշ սրճանոց մ'երթայ:

Հայոց խոհանոցը թէ նորագոյն եւ թէ արեւելեան ազգային կերակուրներ կը մատակարարէ. կը սիրեն սաստիկ անուշահոտ՝ սափրանով եւ մեղրով պատրաստուած խմորեղէն մը, զոր « խաթլամէյթի » կը կոչեն, եւ մեղրի մէջ եփուած ու խորոված ընկոյզ խաշխաշով, զոր « տալաուղ » կ'անուանեն. դարձեալ՝ թթու կաթէ եւ աղատքեղէ շինուած « յուռութով », պատրաստուած դեղնագոյն ապուռ մը, սափրանով եւ մսի ձեծածով պատրաստուած փողխամորի